ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2023

ԴԱՇՆԱՄՈՒՐ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
2) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
3) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
4) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր

2 Լարվածք է կոչվում

1) երաժշտական համակարգի հնչյունների բացարձակ բարձրությունը
2) երաժշտական հնչյունների դասավորությունը
3) երաժշտական հնչյունների կանոնավոր շարվածքը
4) երաժշտական համակարգի հնչյունների հավասար բարձրությունը

3 Ինտերվալներն ունեն երկու մեծություն՝

1) բացարձակ և տոնային
2) բացարձակ և լրացուցիչ
3) աստիճանային և տոնային
4) աստիճանական և լրացուցիչ

4 Փոքր սեպտիման կազմված է

1) 6 աստիճանից և 7 տոնից
2) 6 աստիճանից և 5 տոնից
3) 7 աստիճանից և 6 տոնից
4) 7 աստիճանից և 5 տոնից

5 Եռատոնն այն ինտերվալն է, որը բաղկացած է

1) երեք աստիճանից
2) երեք կիսատոնից
3) երեք տոնից
4) երեք հնչյունից

6 Մինոր կվարտսեքստակորդի կառուցվածքն է

1) մ.3 + մծց. 3
2) մծց. 4+փ.3
3) մք.4+ մ.3
4) մք.4 + փ.3

7 Սեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

8 $D3^{4-}$ ը կառուցվում է

1) 7-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ փ.3
2) 7-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ մ.3
3) 2-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ փ.3
4) 2-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ մ.3

9 Զուգահեռ տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

10 Հարմոնիկ մաժորին բնորոշ է

1) 6^{+} աստիճանը
2) 7^{+} աստիճանը
3) 6^{-}, 7^{-} աստիճանները
4) 6^{-} աստիճանը

11 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^{+} աստիճանը
2) 7^{-} աստիճանը
3) 6^{+}, 7^{+} աստիճանները
4) 6^{-}, 7^{-} աստիճանները աստիճանը

12 Ռիթմ է կոչվում

1) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների հաջորդականությունը
2) հնչյունների ժամանակային կազմակերպված հաջորդականությունը
3) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
4) միատեսակ հնչյունների կազմակերպված հաջորդականությունը

13 Պարզ են համարվում այն չափերը, որոնք ունեն

1) մի քանի շեշտ
2) մեկ կամ մի քանի մաս
3) մեկ մաս
4) մեկ շեշտ

14 Տակտում կա այնքան խումբ, որքան

1) հնչյունների քանակն է
2) հիմնական մասերի քանակն է
3) շեշտերի քանակն է
4) թույլ մասերի քանակն է

15 Այն նշանը, որը դրվում է հնգագծի սկզբում և ցույց է տալիս որոշակի նոտայի տեղը, կոչվում է

1) նոտա
2) չափ
3) բանալի
4) ակոլադ

16 Նշվածներից ո՞ր շարքում են ընդգրկված միայն զարդահնչյունները /մելիզմները/

1) ֆորշլագ, տրել, մորդենտ, գրուպետտո
2) ֆորշլագ, ֆիգուրացիա, գրուպետտո, տրել
3) արպեջիո, ֆիգուրացիա, տրիոլ, տրեմոլո
4) մորդենտ, տրեմոլո, արպեջիատո, ֆորշլագ

17 Նշվածներից ո՞ր շարքում են բոլոր տերմինները նշանակում տեմպ

1) Largo, accelerando, Andante
2) Allegro, Grave, attacca
3) A tempo, Lento, ritenuto
4) Prestissimo, Festivo, Moderato

18 Ո՞ր շարքի աստիճաններն են պատկանում սուբդոմինանտային խմբին

1) I, IV, VI
2) VI, IV, II
3) I, III, VII
4) III, V, IV

19 Ո՞ր շարքում են ընդգրկված Ազատ ոճի պոլիֆոնիայի գրելաձևերը

1) Ֆուգա, ինվենցիա
2) կոնտրապունկտ, իմիտացիա
3) ստրետտա, մոտետ
4) կանոն, ֆուգետտա

20 Սոնատային ձևը այն ձևն է, որը

1) հիմնված է երկու թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
2) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երկու բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում
3) հիմնված է երեք թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
4) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, ռեպրիզ, մշակում

21 Դաշնամուրի և նվագախմբի համար գրված քանի՞ կոնցերտ ունի Լյուդվիգ վան Բեթհովենը

1) 3
2) 5
3) 6
4) 4

22 Ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործության մեջ է ձևավորվել սոնատ-սիմֆոնիկ ցիկլը

1) Դոմենիկո Սկարլատի
2) Յոզեֆ Հայդն
3) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
4) Լյուդվիգ վան Բեթհովեն

23 Դաշնամուրային քանի՞ սոնատի հեղինակ է Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը

1) 24
2) 20
3) 19
4) 32

24 Վ.Ա.Մոցարտի դաշնամուրային կոնցերտների մասերը սովորաբար հաջորդում են հետևյալ սկզբունքով.

1) Դանդաղ – արագ - դանդաղ
2) Արագ – դանդաղ – արագ
3) Արագ – արագ-դանդաղ
4) Դանդաղ – դանդաղ -արագ

25 Զարդված արպեջիոներով բասերն անվանում են

1) «Մարկիզյան»
2) «Մոցարտյան»
3) «Հայդնյան»
4) «Ալբերտյան»

26 Կառլ Չեռնիի ուսուցողական ժողովածուներից ո՞րն է առավել լայնորեն կիրառվում մանկավարժական պրակտիկայում

1) «100 պիես-վարժություն», op.139
2) «Արագավարժության դպրոց», op.299
3) «Legato-ի և Staccato-ի դպրոց», op. 335
4) «40 ամենօրյա վարժություններ», op. 337

27 Նշված հասկացություններից ո՞րը մելիզմ չէ

1) Մորդենտ
2) Տրիոլ
3) Գրուպետտո
4) Ֆորշլագ

28 Ո՞ր կոմպոզիտորն է գրել Կոնցերտ ձախ ձեռքի համար

1) Կլոդ Դեբյուսի
2) Մորիս Ռավել
3) Քամիլ Սեն-Սանս
4) Ֆերենց Լիստ

29 Թվարկված կոմպոզիտորներից ո՞վ չի պատկանում ֆրանսիական կլավեսինիստներին.

1) Ֆրանսուա Կուպերեն
2) Ժան Ֆիլիպ Ռամո
3) Դոմենիկո Սկարլատի
4) Լուի Կլոդ Դակեն

30 Թվարկված հասկացություններից ո՞րը չի վերաբերում ռիթմիկ պատկերին.

1) Կետագծային
2) Սինկոպա
3) Հեմիոլ
4) Տրել

31 Դոմենիկո Սկարլատիի ավելի քան 500 սոնատները գրված են

1) Հնագույն սոնատային ձևում
2) Հնագույն երկմաս ձևում
3) Դասական սոնատային ձևում
4) Բարդ եռամաս ձևում

32 Մանկավարժական երկացանկում տեղ չի գտել Յոհան Սեբաստիան Բախի

1) «Աննա Մագդալենա Բախի նոթատետրը»
2) «Ֆուգայի արվեստը»
3) 15 երկձայն և 15 եռաձայն ինվենցիաները
4) «Լավ տեմպերացված կլավիրը»

33 Երկրորդ աշխարհամարտի տարիներին Երևանի կոնսերվատորիայում է դասավանդել

1) Սվյատոսլավ Ռիխտերը
2) Յակով Ֆլիերը
3) Կոնստանտին Իգումնովը
4) Հենրի Նեյգաուզը

34 Յոհան Սեբաստիան Բախի կլավիրային ստեղծագործությունների հայտնի խմբագրողներից ո՞վ է առավել մոտ մնացել հեղինակային բնագրին

1) ՄենՖեռուչո Բուզոնին
2) Կառլ Չեռնին
3) Բրունո Մուջելինին
4) Բելա Բարտոկը

35 Ռոմանտիզմի ներկայացուցիչ կոմպոզիտորներից ո՞ւմ անվան միջազգային մրցույթն է բացառապես նվիրված մեկ հեղինակի ստեղծագործությունների կատարմանը

1) Ֆրանց Շուբերտ
2) Ռոբերտ Շուման
3) Ֆրեդերիկ Շոպեն
4) Յոհաննես Բրամս

36 Նշեք հայ դաշնակահարի, ով Բախի անվան միջազգային մրցույթին 1-ին մրցանակի է արժանացել

1) Սվետլանա Նավասարդյան
2) Անահիտ Ներսիսյան
3) Կարինե Օհանյան
4) Արմեն Բաբախանյան

37 Հետևյալ դաշնամուրային ցիկլերից ո՞րը չի պատկանում Ռոբերտ Շումանին

1) «Թիթեռնիկներ»
2) «Կառնավալ»
3) «Մանկական ալբոմ»
4) «Սիմֆոնիկ էտյուդներ»

38 Նշեք Արամ Խաչատրյանի մանկական ցիկլը

1) «Մանկական ալբոմ»
2) «Ալբոմ թոռնիկիս»
3) «Մանուկներին»
4) «Ծեր տատիկի հեքիաթները»

39 Նշեք Սերգեյ Պրոկոֆևի մանկական ցիկլը

1) «Մանկական ալբոմ»
2) «Մանկական տետր»
3) «Մանկական անկյուն»
4) «Ծեր տատիկի հեքիաթները»

40 Նշեք Կլոդ Դեբյուսիի «Մանկական անկյուն» դաշնամուրային ցիկլից պիեսի անվանումը



1) Տիկնիկի սերենադը
2) Ձյունը պարում է
3) Փոքրիկ հովիվը
4) Տիկնիկային քեք-ուոք

41 Նշված կոմպոզիտորներից ո՞վ չի գրել «Պրելյուդներ և ֆուգաներ» դաշնամուրային ցիկլ.

1) Յոհան Սեբաստիան Բախ
2) Ռոդիոն Շչեդրին
3) Դմիտրի Շոստակովիչ
4) Ֆրեդերիկ Շոպեն

42 Սանկտ-Պետերբուրգյան դաշնամուրային կատարողական դպրոցի ներկայացուցիչ է

1) Վաչե Ումր-Շատը
2) Ռոբերտ Անդրիասյանը
3) Յուրի Հայրապետյանը
4) Աննա Ամբակումյանը

43 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը «Վեց պատկեր»-ում

1) Պուանտիլիստական
2) Մոդալ
3) Դոդեկաֆոն
4) Պոլիֆոնիկ

44 Նշեք հայ դաշնակահարի, ով Յո.Ս.Բախի և Վ.Ա.Մոցարտի բոլոր դաշնամուրային կոնցերտների կատարողն է եղել

1) Սվետլանա Նավասարդյան
2) Անահիտ Ներսիսյան
3) Արմեն Բաբախանյան
4) Մարինե Աբրահամյան

45 Նշեք հայ դաշնակահարի, ով իրականացրել է հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի ամբողջական ձայնագրությունը

1) Սվետլանա Նավասարդյան
2) Արմեն Բաբախանյան
3) Մարինե Աբրահամյան
4) Հայկ Մելիքյան

46 Քանի՞ տետրից է բաղկացած Ֆերենց Լիստի «Ճամփորդության տարիները» դաշնամուրային ալբոմը

1) 2
2) 3
3) 5
4) 6

47 Ընտրեք Յոհաննես Բրամսի՝ 4 ձեռքի համար գրված ստեղծագործությունը

1) Վարիացիաներ Պագանինիի թեմայով
2) Վարիացիա և ֆուգա Հենդելի թեմայով
3) Վարիացիաներ սեփական թեմայով
4) Վարիացիաներ Շումանի թեմայով

48 Քանի՞ պիեսից է բաղկացած Պյոտր Չայկովսկու «Տարվա եղանակները» դաշնամուրային ցիկլը

1) 4
2) 16
3) 12
4) 24

49 Նշեք Պաուլ Հինդեմիթի «Ludus tonalis» դաշնամուրային ցիկլի ճիշտ կառուցվածքը

1) Պրելյուդ, 12 ֆուգա, 11 ինտերլյուդիա և Պոստլյուդ
2) Պրելյուդ, 12 ֆուգա, 12 ինտերլյուդիա և Պոստլյուդ
3) 12 ինտերլյուդիա, 12 ֆուգա և Պոստլյուդ
4) 12 ինտերլյուդիա, 12 ֆուգա

50 Նշեք նկարչին, ում աշխատանքների ազդեցության ներքո է գրված Մոդեստ Մուսորգսկու «Պատկերներ ցուցահանդեսից» դաշնամուրային պիեսների շարքը

1) Միխայիլ Վռուբել
2) Էռնստ Նեիզվեստնի
3) Վիկտոր Գարտման
4) Գեորգի Յակուլով

51 Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում Ռոբերտ Շումանին

1) Մանկական ալբոմ
2) Բալլադներ
3) Մանկական պատկերներ
4) Երաժշտական ակնթարթներ

52 Լյուդվիգ վան Բեթհովենի դաշնամուրային ո՞ր սոնատից է հատվածը



1) թիվ 8՝ «Պաթետիկ»
2) թիվ 21՝ «Ավրորա»
3) թիվ 23՝ «Ապասիոնատ»
4) թիվ 29՝ «Համերկլավիր»

53 Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում Ֆրանց Շուբերտի գրչին

1) «Թափառականը» ֆանտազիան
2) «Թիթեռնիկներ»
3) «Abegg» վարիացիաներ
4) «Արցունք»

54 Ֆրեդերիկ Շոպենի ո՞ր նոկտյուրնից է հատվածը



1) Opus 9՝ Es-dur
2) Opus 27՝ Des-dur
3) Opus 37՝ g-moll
4) Opus 48՝ c-moll

55 Քանի՞ տետրից է բաղկացած Բելա Բարտոկի «Միկրոկոսմոս» դաշնամուրային ցիկլը

1) 3
2) 4
3) 6
4) 7

56 Երաժշտական դպրոցների ծրագրում ո՞ր դասարանից է ներառված Յոհան Սեբաստիան Բախի «Փոքրիկ պրելյուդներն ու ֆուգաները»

1) 3-րդ
2) 4-րդ
3) 6-րդ
4) 7-րդ

57 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային պարերի հատվածը



1) Կոմիտաս
2) Քրիստափոր Կառա-Մուրզա
3) Նիկողայոս Տիգրանյան
4) Ռոբերտ Անդրիասյան

58 Երաժշտական դպրոցների ծրագրում ո՞ր դասարանից է ներառված Գայանե Չեբոտարյանի «Դաշնամուրային երաժշտություն երեխաների համար» ժողովածուն

1) 2-րդ
2) 3-րդ
3) 1-ին
4) 4-րդ

59 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային պիեսի հատվածը



1) Կոմիտաս
2) Էդվարդ Միրզոյան
3) Ռոբերտ Անդրիասյան
4) Գեորգի Սարաջև

60 Ո՞ւմ գրչին է պատկանում հետևյալ հատվածը



1) Արամ Խաչատրյան
2) Ռոդիոն Շչեդրին
3) Առնո Բաբաջանյան
4) Ալեքսանդր Հարությունյան